

**Ալեքսանդր Ս. Մանասյան**

*Փիլ. գիտ. դոկտոր*

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ**

**ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ**

Որպես դարաշրջանի հիմնական հակասություն\*

**Բանալի բառեր** - սոցիալական ուժ, քաղաքական ուժ, տնտեսական մարդ, քաղաքական մարդ, արևմտյան տնտեսակարգային մոդել, արևելյան տնտեսակարգային մոդել, տնտեսական խորհրդարան:

Տնտեսական կամ քաղաքական որևէ նախագիծ շրջադարձային վերափոխությունների ներուժ կարող է ունենալ որևէ երկրի համար, եթե առկա իրողությունների վերլուծության հիման վրա բացահայտում է առաջընթացը խոչընդոտող խորքային պատճառները և առաջարկում դրանց հաղթահարման կոնկրետ ուղիներ: Բայց դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե պատասխանատու պետական գործիչներն ու հաստատությունները դեմքով շրջվեն դեպի երկրի զարգացման համար սկզբունքային նշանակություն ունեցող, ուստիև գիտական իմաստավորում պահանջող հարցերը և դրանք դարձնեն քննարկումների գլխավոր թեման: Ներկայումս մենք ևս ունենք մեր երկրի առաջընթացը խոչընդոտող խորքային պատճառներին և դրանց հաղթահարման ուղիներին վերաբերող հարցերը ներքին քաղաքական խոսույթի օրակարգ բերելու խնդիր:

1991 թվականից ի վեր, երբ խորհրդային սոցիալիզմից անցում կատարեցինք կապիտալիզմի այն տարատեսակին, որին մասնագետները տվել են **վայրի կապիտալիզմ** անվանումը, ազատական տնտեսության՝ դրսից ներմուծված տեսակի վերլուծության ու գնահատման հարցերը մեզանում համառորեն շրջանցվել են: Կրավորական կեցվածք են ընդունել նաև գիտական շրջանակները, որոնք խնդիրը չեն դարձրել գիտական հետազոտության նյութ և չեն կարողացել կառուցողական գիտական ընդդիմություն դառնալ իշխանությունների համար: Մինչ այդ աշխարհն արդեն իսկ գիտեր շուկայական տնտեսության

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 25.02.2020:

հաջողված մոդելներ՝ **սոցիալական կողմնորոշման շուկայական տնտեսության** արևմտագերմանական մոդելը, **ընդհանուր բարօրության հասարակություն** անունը ստացած շուկայական տնտեսության տարբերակը և այլն: Այն հարցը, թե ճիշտ էր արդյոք կապիտալիզմի բազմաթիվ տարբերակների մեջ հոգուտ նրա վայրի տեսակի մեր կատարած ընտրությունը, մեր գիտությանը չհուշեցին անկախության երկու-երեք տարվա ընթացքում ՀԽՍՀ-ում ստեղծած հզոր արդյունաբերական համալիրի ջարդոտումը, երկրի հայտնվելը տնտեսական անկման ու աղքատության անդունդի հատակում և նույնիսկ բնաթափման բնույթ ստացած արտագաղթը: Դրանց գիտական վերլուծության ու իմաստավորման խնդիրներն ընդհանրապես մնացին չգիտակցված ու նաև չպահանջված: Անցած ուղու իմաստավորմանը, նրա քննական վերլուծությանը մեզ չմղեցին նաև նախագահական ու խորհրդարանական ընտրություններին ուղեկցող քաղաքական ցնցումները, երբ թվում էր, թե բեկումնային այդ պահերին մեր ձախողումների պատճառների փնտրտուքը պետք է դառնար ներքին քաղաքական խոսույթի առարկա:

Այսպես թե այնպես հետխորհրդային շատ երկրների հետ ՀՀ առաջնորդները բռնեցին նոր հասարակարգ կառուցելու ուղին «Մերժիր սոցիալիզմը» կարգախոսով: Նկատենք, որ իրենց սպառած, առաջընթացը խոչընդոտող երևույթների մերժումը (բացասումը) հասարակական կյանքի բնական ուղեկիցն է: Կառավարվող, այլ ոչ թե սոցիալական տարերքին թողնված գործընթացներում այդ մերժումը (բացասումը), որպես կանոն, կատարվում է նախապես մշակված որևէ սոցիալ-քաղաքական նախագծի իրագործման համար: Դա հնի **կառուցողական մերժման** մշակույթն է: Մեր դեպքում անցումային գործընթացի սկիզբը դրած քաղաքական ուժերը գաղափար չունեին ո՛չ ինքնահոսի թողնված անցման վերջնարդյունքների, ո՛չ էլ դրան ուղեկցող վտանգների հաղթահարման ուղիների մասին:

**Նույնն է վիճակը նաև այսօր:** Ավանդույթի ուժ է ձեռք բերում քաղաքական մի մշակույթ, որին կարծես հակացուցված է մերժվող հնի և որդեգրվող նորի (քաղաքական նոր ուղեգծի) տեսական իմաստավորումը: Հասարակարգային իրողությունների խորքային վերլուծությունից զուրկ և այդ իմաստով դեպի սպազան չկողմնորոշված նման քաղաքական մշակույթը կարելի է անվանել **դեստրուկտիվ (ապակառուցողական, հոռի) մերժման քաղաքական մշակույթ:** Այսօր մեր ներքին քաղաքական կյանքը հենց այդ հունով է ծավալվում: Պատահական չէ, որ գաղափարների ու ծրագրերի մրցակցությունը մեզանում փոխարինված է ժողովրդին տրվող խոստումների մրցակցությամբ, քաղաքական ուղեգծի փոփոխությունը՝ իշխանափոխությամբ: Դեստրուկտիվ մերժման քաղաքական մշակույթը երկրի զարգացման խնդիրները հայեցակարգերի, քաղաքական ուղեգծերի ու նախագծերի մշակման հարթությունից տեղափո-

խում է **անձերի դիմակայության** հարթություն՝ այդտեղ փնտրելով սոցիալական բոլոր ձախողումների պատճառները: Թեև ակնհայտ է, որ եթե պահպանվում է անարդարություն ու անհավասարություն ծնող տնտեսակարգային մեքենան, ոչ մի իշխանափոխություն, աշխատասենյակների ցուցանակների ոչ մի փոփոխություն ի գործու չէ խափանելու հնի վերարտադրությունը<sup>4</sup>: Պահանջվում է այդ մեքենան կազմաքանդող նախագիծ:

Կան նման նախագծերին ներկայացվող անհրաժեշտ մեթոդաբանական պահանջներ, որոնց դրանք պետք է բավարարեն հաջողության հասնելու համար: Ակնհայտ է, օրինակ, որ անպայման պետք է բացահայտվի վերափոխման ենթական՝ **հասարակարգի հիմնական հակասությունը**, քանի որ ինքնին պարզ է, որ սոցիալական գործընթացների մակերեսին դրսևորվող բացասական երևույթները չեն կարող իրենց էությանը համարժեք ձևով ըմբռնվել ու զնահատվել, եթե չկապվեն համակարգի խորքերում առկա այն կոնֆլիկտի հետ, որից դրանք ածանցված են որպես հետևանքներ:

Մեր օրերում ավելի ու ավելի տեսանելի է դառնում, որ հետմոդեռնի դարաշրջանի գլխավոր հակամարտությունը **տնտեսական մարդու** (homo economicus) և **քաղաքական մարդու** (homo politicus) բախումն է: Այս գաղափարի գիտական ընկալումն առայժմ հասունացման փուլում է: Մենք դրան անդրադարձել ենք դեռևս 2007 թվականին<sup>5</sup> հիմնավորելով այն միտքը, որ վայրի կապիտալիզմից դուրս գալու ոչ մի նախագիծ չի կարող հաջողության հավակնել առանց տնտեսական մարդու և քաղաքական մարդու կոնֆլիկտի անցավագին հանգուցալուծման: Տնտեսական մարդու և քաղաքական մարդու ու նրանց վրա հիմնվող տնտեսական և քաղաքական իշխանությունների հարաբերության դիտանկյունից պատմական ընթացքի քննության էվրիստիկական արժեքն այն է, որ այդտեղից են երևում նրա այնպիսի կողմերը, որոնք տեսանելի չեն այլ դիտակետերից: Բավական է ասել, որ այն տրամադրում է համաշխարհային պատմության պարբերացման՝ նախորդներից տարբեր հիմք: Եթե **Կ. Մարքսը**, օրինակ, արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների զարգացման հիմքով առանձնացնում էր հասարակության պատմական զարգացման հինգ ֆորմացիա, եթե **Ու. Ռոսսոն** արտադրության բնույթի փոփոխության հիմքով առանձնացնում էր պատմական զարգացման երեք (ագրարային, արդյունաբերական և հետարդյունաբերական) շրջափուլ, ապա իշխանության նկատմամբ տնտեսական մարդու և քաղաքական մարդու հարաբերության դիտակետից նույն այդ պատմության մեջ առանձնանում է երկու շրջափուլ: **Առա-**

4 Այս դետրոնկտիվ մեթոման քաղաքական մշակույթը վերջին անգամ մեզանում դրսևորվեց «Մերժիր Սերժին» կարգախոսով իրագործված 2018 թվականի մայիսյան թավշյա իշխանափոխության ժամանակ, որն անցած երկու տարվա ընթացքում այդպես էլ չբացահայտեց երկրի զարգացման ուղիները:

5 Տե՛ս **Սանասյան Ա.**, Տնտեսական պառլամենտով դեպի ազգային համաձայնություն, «Ազգ» օրաթերթ, Եր., 4 մայիսի 2007 թ.: Հոդվածը գրվել է 2007 թ. Աժ ընտրությունների նախօրեին: Նրանում առաջադրված գաղափարն իր նախընտրական ծրագրերում որդեգրել էր «Ազգային համաձայնություն» կուսակցությունը:

ջինը՝ պետությունների առաջացումից մինչև բուրժուական հեղափոխությունները, իսկ **երկրորդը** այդ հեղափոխություններից մինչ մեր օրերն ընկած պատմաշրջանն է: Առաջինի համար բնութագրական է այն, որ տնտեսական մարդու սոցիալական ուժը, որն առարկայանում էր նրան որպես մասնավոր սեփականություն պատկանող ստրուկների ու տարածքների տեսքով, ուղղակիորեն փոխարկվում էր քաղաքական իշխանության: Ամենամեծ ստրկատերն էր դառնում ստրկատիրական պետության գլուխը: Նույնն էր իրավիճակը նաև ավատատիրության շրջանում, երբ ամենախոշոր հողատերն ու ճորտատերն էր զբաղեցնում թագավորական գահը<sup>6</sup>: Սոցիալական ուժի՝ անմիջականորեն քաղաքական ուժի փոխարկման այս երևույթը տևեց մինչև բուրժուական հեղափոխությունները, որոնք դարձան նոր տիպի քաղաքական ուժադաշտի ձևավորման մեկնակետ: Եղբայրության, ազատության ու հավասարության կարգախոսներով հաստատված հասարակարգն ի վերջո ընդունեց քաղաքական հավասարության՝ մինչ օրս պառլամենտական ժողովրդավարության գլխավոր ձեռքբերումը համարվող «մեկ ընտրող - մեկ քվե» բանաձևը: Հենց սկզբից ակնհայտ էր, որ հեղափոխական վերելքի պայմաններում ընդունված՝ մարդկանց քաղաքական հավասարության այդ բանաձևը ցանկալի չէր տնտեսական մարդու համար: Ի տարբերություն նախորդ ժամանակների՝ նրա սոցիալական ուժն այժմ միայն «ընտրությունների մաղով» անցնելով կարող էր փոխարկվել իշխանության: Շատ ժամանակ չպահանջվեց, որպեսզի բացահայտվի հեղափոխությունների կողմից հռչակված ազատության (որն այս դեպքում ըմբռնվում էր որպես շուկայական մրցակցության ազատություն) ու «մեկ ընտրող - մեկ քվե» բանաձևով ներկայացվող քաղաքական հավասարության սկզբունքի ներքին գոյաբանական հակասությունը: Ակնհայտ դարձավ հակասությունը մի կողմից՝ հասարակության հավաքական շահի (որի կրողը համընդհանուր ընտրական համակարգով իշխանության եկած քաղաքական մարդն է), մյուս կողմից՝ իր հզորությանը համարժեք իշխանության հավակնող տնտեսական մարդու շահի միջև: Ընտրագանգվածի մեջ փոքրամասնություն կազմող տնտեսական մարդն ի սկզբանե պառլամենտական ժողովրդավարության «մեկ ընտրող - մեկ քվե» բանաձևն ընկալել է որպես պոտենցիալ խոչընդոտ իր սոցիալական ուժն իշխանության փոխարկելու ճանապարհին<sup>7</sup>: Չուտ գործնական բնույթի քայլերից բացի՝ տնտեսա-

6 Ինչ-որ զորավար կամ պալատական հեղաշրջմանը մասնակից ինչ-որ ավելի համեստ սեփականության տեր ստրկատեր կամ ճորտատեր կարող էր դառնալ պետության գլուխ, սակայն նման փաստերը չեն արժեզրկում առաջարկվող դրույթն այն մասին, որ երկու հասարակարգերում էլ սոցիալական ուժը քաղաքական ուժի էր փոխարկվում ուղղակիորեն:

7 Քաղաքական հավասարության գաղափարի տեսանկյունից կասկածներ չհարուցող «մեկ ընտրող - մեկ քվե» սկզբունքը տնտեսական մարդուն խորհրդարանում կողմեր քաղաքական փոքրամասնության մեջ, եթե քաղաքական իշխանությունը նման համամասնությամբ բաժանվեր համապատասխան մասերի: Կյո հարցը Ֆրանսիական մեծ հեղափոխությունից ավելի քան մեկ դար առաջ Անգլիայում եղել է կատարի ամձակատման առարկա **հավասարության** ու **անկասկանների** միջև: Վերջիններս 1647 թ. Փաթնիում կայացած զինվորական խորհրդաժողովում մերժեցին ազատությունների ու ազատականության արմատական գաղափարների հետամուտ **հավասարների** առաջարկությունը համընդհանուր ընտրական իրավունքի սահմանման ու ունեցվածքային ցեղի վերացման մա-

կան մարդը ազատ ձեռներեցության ոլորտը քաղաքական մարդու կամայականություններից պաշտպանելու համար շրջանառության մեջ է դրել հանրության լայն շրջանակների համար ընկալելի գաղափարներ, որոնք հետագայում թևավոր խոսքի տեսքով լայն տարածում են գտել Եվրոպայում, իսկ հետագայում նաև ծավալել-բացորոշել է դրանք՝ որպես քաղաքատնտեսական տեսության ամբողջական հիմնատարրեր: Խոսքը, այսպես կոչված, **մաքուր կապիտալիզմի** տեսության մասին է, որի առանցքային գաղափարը հայտնի է “Laissez-faire” (ֆրանսերեն նշանակում է «թույլ տվեք անել»), ասել է թե՛ «Թույլ տվեք աշխատել») տարածված աֆորիզմի ձևով: Տնտեսական այդ դոկտրինի իմաստը հանգում է նրան, որ մասնավոր ձեռներեցությունը պետք է ազատ լինի պետության միջամտությունից (ծայրահեղ դեպքում այդ միջամտությունը պետք է հասցվի նվազագույնի): Դա, ըստ էության, տնտեսական մարդու և քաղաքական մարդու հարաբերության մոդել էր, որը մայրցամաքային Եվրոպայում քարոզվում էր տնտեսական մարդու կողմից՝ ազատվելու համար միապետական քաղաքական կարգի լծից: “Laissez-faire” սկզբունքի<sup>8</sup> վրա հիմնված դոկտրինը պետության դերակատարությունը ներկայացնում էր **«գիշերային պահակ»** այլաբանությամբ՝ այդ «պահակին» վերապահելով միայն մասնավոր սեփականության պաշտպանության և շուկայի ազատության վերահսկման հարցերը: Փրանսիական մեծ հեղափոխությունից հետո, երբ տնտեսական մարդը հայտնվեց իշխանության մեջ, նա այլևս նախկին տռանդով չէր հետապնդում “Laissez-faire” սկզբունքի իրագործումը: Նրա հոգսը պառլամենտական ժողովրդավարությամբ ընդունված «մեկ ընտրող - մեկ քվե» սկզբունքն էր:

Իսնդիորը նոր որակ ձեռք բերեց 19-րդ դարի կեսերից սկսած՝ քաղաքական կյանքի կուսակցականացման պայմաններում: 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի կեսը՝ շուրջ 100 տարվա ընթացքում, տնտեսական մարդուն հաջողվեց կիրառել սոցիալական ու քաղաքական տեխնոլոգիաներ<sup>9</sup>, որոնք թույլ տվեցին նրան քայլ առ քայլ գրավել քաղաքական իշխանությունը<sup>10</sup>: Կային դրան նպաստող օբյեկտիվ գործընթացներ: Դա հասարակության խորացող

---

սին՝ զգուշանալով, որ սեփականագուրկ զանգվածից խորհրդարանում հայտնված պատգամավորները կարող են մասնավոր սեփականատերերի դեմ ուղղված օրենքներ ընդունել:

8 Գրականության մեջ այս արտահայտությունն առաջին անգամ հանդիպում է 1736 թ. կյուրովիկոս XV-ի ժամանակներում Ֆրանսիայի արտգործնախարար մարկիզ Ռենե դը Արժանտոնի հուշագրություններում (“Mémoires et journal inédit du Marquis d’Argenson”, Paris, 1858, т. V): Այնուհետև այն հանրային հնչեղություն է ստացել ֆիզիոկոստ-տնտեսագետների 1758 թ. համաժողովում տնտեսագետ և առևտրական Վենսենա դե Գուրմեի ելույթում:

9 Օրինակ՝ լոբբիզմի ինստիտուտի օրինականացումը և իշխանություն ունեցող քաղաքական մարդկանց կաշառումը, սեփական կուսակցությունների ստեղծումը, քաղաքական իշխանության մեջ «իր մարդկանց տեղավորումը», հասարակագիտական այնպիսի հաստատությունների հիմնումը, որոնց գլխավոր խնդիրը սոցիալիզմի գաղափարի վարկաբեկումը և մասնավոր ձեռնարկատիրությունը որպես ժողովրդավարության միակ պատվար ներկայացնելն էր: Այդպիսի գործունեություն ծավալելու համար տնտեսական մարդը միջոցների պակաս չուներ:

10 Արևմուտքի երկրների քաղաքական պրակտիկան արդեն 19-20-րդ դարերի սահմանագլխին բյուրեղացրեց քաղաքական տարբեր գաղափարախոսությունների հանդեպ տնտեսական մարդու վերաբերմունքը: Նրա համար ընդունելի է ցանկացած գաղափարախոսություն, որն ազգին հասցեագրված սոցիալական նախագծերում չի դնում մասնավոր սեփականության և ազատ շուկայական տնտեսության վերացման խնդիր, կամ որը որդեգրում է կապիտալիզմի աստիճանական վերափոխման մարտավարություն: 20-րդ դարի վերջերին եվրոպական սոցիալ-դեմոկրատիան բռնեց կապիտալիզմի աստիճանական բարեփոխման ուղին և լիովին ընդունելի դարձավ տնտեսական մարդու համար:

սոցիալական հատվածայնացումը և «դասական բանվոր դասակարգի» տարաբախումուն էր սոցիալական այլ հանրություններում, որի հետևանքով կուսակցությունները կորցրին իրենց «դասակարգային ծագումնաբանությունը» և սկսեցին ազգին (մեծ հանրությանը) ներկայանալ նրա առջև ծառայած մարտահրավերների, երկրի համար կենսականորեն նշանակալից խնդիրների իրենց ըմբռնման դիրքերից<sup>11</sup>: Որոշակիությունից ու հստակությունից զուրկ քաղաքական բազմաձայնության պայմաններում տնտեսական մարդուն հաջողվեց հանրային գիտակցության մեջ ներդնել գաղափարախոսական բնույթի այն գլխավոր դրույթը, որ տնտեսական մարդու շահը համընկնում, նույնանում է մեծ հանրության (ազգի, պետության) շահի հետ<sup>12</sup>, որը և արևմտյան քաղաքակրթական չափանիշներով ընդունելի դարձրեց նրա կողմից քաղաքական իշխանության գրավումը:

Այսօր քաղաքական իշխանության բուրգի գագաթին հայտնված ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը** «գործարարի աշխատանքային կոստյումի» վրա քաղաքական մարդու կոստյում հագած տնտեսական մարդու խորհրդանիշն է: Արևմտյան տնտեսակարգային մոդելը քաղաքական իշխանության է բերել տնտեսական մարդուն, որը ժողովրդավարության տարբեր ցուցանակների տակ տիրում է նաև քաղաքական իշխանության մենաշնորհին: Դրանից են ածանցված արևմտյան հասարակության բոլոր ներքին հիվանդությունները:

Տնտեսակարգի արևմտյան մոդելը միակը չէ աշխարհում: Նրան ձեռնոց է նետել **չինական** կամ, այսպես կոչված, **արևելյան մոդելը**, որում մասնավոր սեփականությունն իշխանության աղբյուր չէ: Այստեղ իշխանության մենաշնորհի տերը **քաղաքական մարդն** է, որի վերահսկողության տակ սոսկ որոշակի սահմաններում է արտոնված մասնավոր ձեռնարկատիրությունը: Ի տարբերություն Արևմուտքի, որտեղ մասնավոր սեփականությունն անձեռնմխելի է, արևելյան մոդելում քաղաքական մարդն այն ցանկացած պահի կարող է օտարել մասնավորից: Երկու տնտեսակարգերի պատմական մրցակցության ելքն այսօր հայտնի չէ: Արևելյան մոդելում տնտեսության զարգացման աննախադեպ բարձր տեմպերը Չինաստանը կարող են դարձնել աշխարհի թիվ մեկ տնտեսությունն ունեցող

11 20-րդ դարի 90-ականներին եվրոպական սոցիալ-դեմոկրատիան ավարտեց դանդաղ, բայց անշեղորեն դեպի աջ ընթացող հայրուրամյա իր դրեյֆը և տեղավորվեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Նեոլեյբորիստ Թոնի Բլերի թեթև ձեռքով **երրորդ ուղի** անունը ստացած հանգրվանում: Չերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ **Գերհարդ Շյոլդերը** նախընտրում էր օգտագործել **Նոր կենտրոն** անվանումը: Բնական է խնդիրը ոչ թե անվանումը, այլ սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական հայեցակարգի այն փոխակերպումն է, որ առաջադրել են Բլերն ու Շյոլդերը 1999 թ. հրապարակած «Եվրոպա. Երրորդ ուղի - Նոր մեջտեղ» ("Europe: The Third Way - die Neue Mitte") մանիֆեստում, որում սոցիալ-դեմոկրատիան ի վերջո փոխակերպվեց սոցիալ-լիբերալիզմի և սոցիալիզմի գաղափարը սկզբունքորեն հանեց գաղափարախոսական ու քաղաքական օրակարգից: Նրանց կազմած մանիֆեստը տնտեսական առաջընթացը տեսնում է շուկայական ազատականության կատարելագործման, ծագող հարցերի հաղթահարման, կապիտալիզմի վերափոխման նախագծերի տևական վերաքննության մեջ:

12 ԱՄՆ-ում տարածված է ազգային շահին տնտեսական մարդու շահի համընկնելու մասին մի թևավոր խոսք, որը պատկանում է «Զենեթալ մտորոս» կորպորացիայի նախագահ Չարլզ Վիլսոնին: 1953 թ. հունվարի 15-ին, երբ Սենատում քննարկվում էր պաշտպանության նախարարի պաշտոնում նրա թեկնածության հարցը, իրեն ուղղված «Ռ»-ն շահերն են ավելի կարևոր լինելու ապագա նախարարի համար երկրի<sup>2</sup>, թե՛ իր ֆիրմայի» հարցին Չարլզ Վիլսոնը պատասխանել է. «Ես միշտ համարել եմ, որ այն, ինչ լավ է երկրի համար, լավ է «Զենեթալ մտորոս»-ի համար և հակառակը»:

երկիրը: Սակայն սա չի նշանակում, որ այստեղ կենսագործվել են սոցիալական արդարության ու հավասարության իդեալները: Քաղաքական իշխանության մենաշնորհն այստեղ ևս վերածվել է անարդարություն, անհավասարություն և կոռուպցիա ծնող մեքենայի: Պաշտոնական տվյալներով ամեն տարի Չինաստանում ավելի քան հազար մարդ է գնդակահարվում կոռուպցիայի և պաշտոնական դիրքի չարաշահման համար՝ ի ցույց դնելով, որ ոչ միայն արևմտյան, այլև արևելյան տնտեսակարգային մոդելում սոցիալական չարիքների արմատը քաղաքական իշխանության մենաշնորհն է:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս ծավալվող գործընթացները նույնպես իրենց իրական բնույթին համարժեք իմաստավորում կարող են ստանալ միայն **դարաշրջանի հիմնական հակասության**՝ տնտեսական մարդու և քաղաքական մարդու հակամարտության վերլուծության համատեքստում: Հակառակ դեպքում դրանք կներկայանան բացատրություն չստացող և ուրեմն չըմբռնված սոցիալական քառտիկ իրարանցումների տեսքով, որոնցում քաղաքական ուղեգծի փոփոխության փոխարեն որպես իրադարձություն կդիտվի իշխանության անցումը մի քաղաքական ուժից (կամ խմբավորումից) մյուսին: Քաղաքական գործընթացների հետխորհրդային պատմությունը փաստում է, որ 1991 թ. Ղարաբաղյան շարժման արիքի վրա Հայաստանում իշխանության էր եկել քաղաքական մարդը: Բայց խորհրդային սոցիալիզմի դեստրուկտիվ մերժումով կողոպուտային սեփականաշնորհման ուղին բռնած երկրում նա շուտով դարձավ ազգային հարստության սեփականատերը և դադարեց գուտ քաղաքական մարդ լինելուց: Եթե Արևմուտքում քաղաքական ու տնտեսական իշխանությունների սերտացումն ու իշխանության գրավումը տնտեսական մարդն իրագործեց և օրինականացրեց շուրջ երկու հարյուր տարվա ընթացքում, ապա մեզանում դա տեղի ունեցավ «մի գիշերվա մեջ»<sup>13</sup> և արևմտյանին հակառակ ընթացքով: **Մեզ մոտ քաղաքական մարդն իր կոստյումի տակ հագավ տնտեսական մարդու կոստյումը:**

2018 թ. թավշյա իշխանափոխությամբ քաղաքական մարդը ռևանշ վերցրեց: Սակայն դեստրուկտիվ մերժման «Մերժի՛ր Մերժին» կարգախոսով իշխանության եկած նոր քաղաքական մարդը տնտեսական մարդու հետ իր հարաբերությունների կարգավորման հայեցակարգ չունեւ և ցայժմ չունի: Նախորդ քաղաքական գծի մերժումն ընդունել է նախորդների (անձերի) մերժման բնույթ: Իր հերթին տնտեսական մարդը ոչ առանց հիմքերի վախ ունի պետության ու ազգի անունից գործող քաղաքական մարդու կողմից իշխանափոխությունը սեփականության վերաբաշխման հանգեցնելու հեռանկարից և կգործադրի կոշտ ու փափուկ բոլոր միջոցները՝ նորից քաղաքական իշխանությանը տիրանալու համար: Եվ կտիրանա, ինչպես ցույց է տալիս արևմտյան փորձը: Դա կարող է տեղի ունե-

<sup>13</sup> Սա այլաբանություն է, որը կիրառվում է ընդգծելու համար գործընթացի, այսպես ասած, կայծակնային բնույթը:

նալ նաև քաղաքական մարդու դանդաղ այլասերմամբ, որը, ինչպես մեզ մոտ արդեն մեկ անգամ եղել է, իր կոստյումի տակ կրկին կհագնի գործարարի կոստյումը: Արդյունքում մենք ուղղակի կունենանք օլիգարխների նոր ցուցակ: Վտանգն այն է, որ դա կարող է վերանել սոցիալական նոր ցնցումների ու քառսի: Պահանջվում են այս երկու ուժերի հարաբերության կարգավորման նոր լուծումներ:

**Արևմտյան և արևելյան մոդելները չեն լուծում հարցը, քանի որ երկու դեպքում էլ առկա է քաղաքական իշխանության քողարկված կամ բացահայտ մենաշնորհ, որը ստեղծում է համակարգային կոռուպցիայի միջավայր:** Բնական է, որ ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ մոդելում տնտեսական ու քաղաքական իշխանությունների բաժանման, հասարակության զարգացման գործընթացներում նրանց գործառույթների հստակեցման ու ներդաշնակեցման հարցերը տեղ չունեն որևէ օրակարգում:

Իրավիճակը, որ մեզանում ձևավորվել է մեկը մյուսին հաջորդած իշխանափոխությունների հետևանքով, հնարավոր է դարձնում դարաշրջանի այս՝ գորդյան հանգույցի՝ քանդումը: Իսնդրի լուծումը մենք համարում ենք տնտեսական մարդու և քաղաքական մարդու միջև այնպիսի հարաբերության հաստատումը, որը կբացառի իշխանության ողջ փաթեթի՝ մեկի կամ մյուսի ձեռքում կենտրոնացումը: Դա իշխանությունների դասական բաժանումից տարբերվող սկզբունք է: Եթե **Ճ. Մոնտեսպյոյի** կողմից առաջադրված իշխանությունների դասական բաժանման սկզբունքը, ըստ էության, հասարակության **կառավարման գործառույթների** բաժանման սկզբունք է, որը, ինչպես ցույց տվեց վերջին երկուսուկես հարյուրամյակի փորձը, չի բացառում իշխանության ողջ փաթեթի՝ քաղաքական կամ տնտեսական մարդու ձեռքում կենտրոնանալու հնարավորությունը, ապա ստորև ներկայացվող նախագիծը, չմերժելով իշխանությունների դասական բաժանման կարևորությունը, հավակնում է այն լրացնելու, եթե փոքր-ինչ ազատ արտահայտվենք, հասարակական կյանքի տարածքների՝ տնտեսական ու քաղաքական տիրույթների բաժանումով: Դա միաժամանակ և՛ սոցիալ-տնտեսական, և՛ քաղաքական վերափոխությունների միտված զաղափար է, որի գործնական իրականացումը ենթադրում է այդ նպատակով համապատասխան հաստատության հիմնում, որը մենք պայմանականորեն կանվանենք **Տնտեսական խորհրդարան (ՏԽ):** ՏԽ-ի միջոցով քաղաքական մարդու և տնտեսական մարդու նոր հարաբերությունների հաստատություննականացման հակիրճ նկարագրությունը հանգում է հետևյալին:

**Տնտեսության մասնավոր հատվածի փաթեթը հանձնվում է մասնավորին, որն այդ ոլորտի կառավարման համար հիմնում է Տնտեսական խորհրդարան (ՏԽ):** ՏԽ-ն շահույթ չհետապնդող կառույց է և գործում է

Վեմ համահայկական հանդես, ժԲ (ժԸ) փարի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020



իր կողմից<sup>14</sup> ընդունված՝ ներքին օրենքի ուժ ունեցող կանոնակարգով, որով սահմանվում են ՏԽ անդամների իրավունքներն ու պարտականությունները, ազատ ու բարեխիղճ մրցակցությանն ու մենաշնորհների կանխմանն ուղղված կանոնները:

ՏԽ-ի՝ որպես շահույթ չհետապնդող կառավարման մարմնի ծախսերը հոգում են ՏԽ անդամները՝ փոքր, միջին և խոշոր բիզնեսների համար տարբերակված անդամավճարներով:

ՏԽ-ն հիմնվում է որպես եռապալատ հաստատություն՝ խոշոր, միջին և փոքր բիզնեսների պալատներով: ՏԽ անդամները չեն ընտրվում: Տնտեսվարող սուբյեկտի կարգավիճակն արդեն իսկ ապահովում է գործարարի մանդատը ՏԽ-ում: ՏԽ անդամ կարող է լինել նաև օտարերկրյա գործարարը: Գործարարի (կամ գործարարների խմբի) շահերը ՏԽ-ում կարող է ներկայացնել ինքը (իրենք) կամ իր (իրենց) կողմից լիազորված անձը (անձերը):

ՏԽ տարբեր պալատների անդամներից, Կառավարության և ՀԿ ներկայացուցիչներից ձևավորվում է վերահսկողության (աուդիտի) մարմին, որի գործառույթը եկամուտները թաքցնելու դեպքերի բացահայտումն ու կանխումն է:

ՏԽ-ն իրավունք ունի ԱԺ-ին ներկայացվող հարցապնդումներով հետևելու, թե ինչպես է Կառավարությունը տնտեսության պետական հատվածում կամ պետական կառավարման ապարատի պահպանման համար ծախսում մասնավոր հատվածից պետբյուջե կատարված մուտքերը: Եթե Կառավարության կողմից կատարվող ծախսերի վերաբերյալ ՏԽ-ն չի ստանում իր կասկածները փարատող հիմնավորումներ, նա իրավունք ունի պահանջելու իր մասնագետների մասնակցությամբ հետաքննություն:

ՏԽ-ում չի գործում «մեկ գործարար - մեկ քվե» սկզբունքը: ՏԽ անդամներն իրենց ձեռք բերած բալերի տեսքով ներկայացվող տարբեր կշռի (արժեքի) ձայն ունեն: Ձայնի բալային արժեքը որոշվում է պետբյուջե մուծված հարկերով, սոցիալական հատկացումներով, պատրաստի արտադրանքի արտահանման ծավալներով, նորարական ծրագրերում արված ներդրումներով (ԱԺ-ն և Կառավարությունը կարող են սահմանել նաև այլ, այդ թվում՝ նաև ոլորտային չափանիշներ):

Կառավարությունն իր կողմից մշակված և ԱԺ-ի կողմից հաստատված տնտեսական զարգացման ռազմավարությամբ նախատեսված գերակայությունների ու առաջնահերթությունների հիման վրա հայտարարում է տնտեսական նախագծերի մրցույթ՝ սահմանելով նախագծի իրականացման վերջնարդյունքներին վերաբերող պահանջներ:

---

14 Դա կարող է լինել գործարարների կամ նրանց կողմից լիազորված մասնագետների համագումարը:

Կառավարության կողմից հայտարարված տնտեսական ծրագրերի մրցույթն անցկացվում է ՏԽ-ում, հաղթողին որոշում է ՏԽ-ում ձևավորված մրցութային հանձնաժողովը, որը նախագծին ներկայացվող պահանջների հարցով կարող է բանակցել Կառավարության հետ, եթե գտնում է, որ այդ պահանջներն ավելի հստակ ձևակերպման կարիք ունեն:

Կառավարության և ՀԿ ներկայացուցիչները մրցույթին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով՝ վերահսկելու համար մրցույթի ընթացքի համապատասխանությունը դրա համար օրենքով սահմանված պայմաններին ու պահանջներին:

Նախագիծը շահած գործարարը և ՏԽ-ն համատեղ պատասխանատվություն են կրում ծրագրի ձախողման կամ ժամկետների խախտման համար՝ սահմանված տուգանքներ մուծելով պետբյուջե: ՏԽ-ն կարող է ձևավորել պահուստային ֆոնդեր՝ փոխհատուցման որոշակի պայմաններով այն ծրագրերին աջակցելու համար, որոնց իրագործումը ծրագիրը շահած գործարարի կամքից անկախ պատճառներով վտանգված է:

Մրցույթում այլ չափանիշներով հավասար միավորներ ունեցող մրցակիցների մեջ նախապատվությունը տրվում է այն գործարարին (կամ գործարարների խմբին), որն ավելի շատ բալերով է մասնակցում մրցույթին: Նման դեպքերում ՏԽ-ն կարող է նաև բանակցել գործարարների հետ՝ տնտեսական նախագիծը համատեղ իրագործելու իր առաջարկի շուրջ նրանց համաձայնությունը ստանալու համար:

Մրցույթի ընթացքում թույլատրվում են ՏԽ տարբեր պալատների գործարարների միավորումներ՝ պայմանով, որ վերին պալատների անդամներին թույլ տրվի գործընկեր ընտրել ստորին պալատների անդամներից, բայց արգելվում է մասնակցել ստորին պալատի անդամների համար հայտարարված ծրագրերի մրցույթին:

Խոշոր ներդրումներ պահանջող ծրագրերը ՏԽ-ն և Կառավարությունը կարող են իրագործել համատեղ՝ փոխադարձ համաձայնությամբ սահմանված ներդրումային չափաբաժիններով:

Արտաքին տնտեսական կապերի հաստատման և շուկաների որոնման հարցերում ՏԽ-ն և Կառավարությունը գործում են համատեղ:

ՏԽ-ն ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք և կարող է ոչ միայն մասնակցել Կառավարության կողմից հայտարարված տնտեսական ծրագրերի մրցույթին, այլև Կառավարությանը ներկայացնել իր կողմից հիմնավորված տնտեսական նախագծեր:

Ազգային ժողովը՝ որպես քաղաքական իշխանության օրենսդիր մարմին, ընդունում է օրենք ՏԽ-ի մասին, որը սահմանում է ՏԽ ինքնավարության ծավալը: ԱԺ-ն ձևավորում է իրեն հաշվետու Կառավարություն, որը մշակում և ԱԺ հաստատմանն է ներկայացնում տնտեսական զարգացման

գերակայությունների մասին հայեցակարգ, պետական հատվածի տնտեսական ծրագրերի նախագծեր, հայտարարում բարձր բալեր և արտոնություններ տրամադրող գիտատեխնիկական ծրագրեր, ընդունում և իրագործում որոշումներ փոքր և միջին բիզնեսներին տրամադրվող արտոնությունների մասին:

Տնտեսական մարդու՝ որպես գործատուի և վարձու աշխատողների հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենքներով և աշխատանքային կոլեկտիվների ու ձեռնարկատիրոջ միջև կնքվող պայմանագրերով:

Քաղաքական իշխանությունը գործող ՏԻՄ գործունեությանը միջամտում է այն դեպքերում, եթե ՏԻՄ-ում ծագում են ներքին անհաղթահարելի հարցեր և ազգային կամ էկոլոգիական անվտանգության խնդիրներ:

Այսպիսով, ազգային (պետական) շահը ներկայացնող քաղաքական մարդը սահմանում է տնտեսության զարգացման ռազմավարությունը, նրա գերակայություններն ու ընդհանուր ուղղությունը՝ դրանց գործնական իրագործման դաշտը թողնելով տնտեսական մարդուն, որը գործում է երկրի Սահմանադրությանը և օրենսդրությանը չհակասող ՏԻՄ կանոնակարգի համաձայն:

Հակիրճ նկարագրությամբ վերը ներկայացված Տնտեսական խորհրդարանի գաղափարի գործնական թիրախը տնտեսական ու քաղաքական իշխանությունների այնպիսի բաժանումն է, որն անհիմաստ է դարձնում քաղաքական իշխանությունը զավթելու տնտեսական մարդու ձգտումը: Անհիմաստ են դառնում քաղաքական իշխանություն մտնելու, այնտեղ «իր մարդուն տեղավորելու», քաղաքական իշխանությունն իր գործունեության համար տանիք դարձնելու տնտեսական մարդու շարժառիթները: Վերանում է ԱԺ մտնելու համար ընտրողներին կաշառք տալու անբարո պրակտիկան, քանի որ տնտեսական մարդն ինքն է դառնում իր ընտրողը ՏԻՄ-ում: ՏԻՄ-ն ոչ միայն պաշտպանում է գործարարին իր հանդեպ քաղաքական մարդու հնարավոր կամայականությունից, այլև նրան թույլ է տալիս հետևել, թե ինչպես են ծախսվում մասնավոր հատվածից պետրոլեոլե կատարված մուտքերը:

Տնտեսական խորհրդարանի հայեցակարգի հիմքում ընկած տնտեսական ու քաղաքական իշխանությունների բաժանման գաղափարը բնավ “Laissez-faire”-ի՝ մաքուր կապիտալիզմի սկզբունք չէ: Այն չի կտրում հասարակական կյանքի տնտեսական ոլորտը քաղաքական մարդուց և չի նվազեցնում նրա կառուցողական գործառնությունը: Քաղաքական մարդը սոսկ **գիշերային պահակ** չէ տնտեսության զարգացման հարցերում: Նա այս նախագծով դառնում է երկրի սոցիալ-քաղաքական ու տնտեսական զարգացման և արտաքին քաղաքականության ճարտարապետը: Նա տնտեսական մարդուն հակակշռում և տնտեսական առաջընթացին աջակցում է ոչ միայն երկրի տնտեսական զարգացման ճիշտ ռազմավարության մշակման և տնտեսության պետական հատ-

վածի կառավարման իր իրավունքով ու պատասխանատվությամբ, այլև տնտեսական մարդու եկամուտների վերահսկողության՝ օրենքով ամրագրված իր լիազորություններով: Քաղաքական իշխանությունն ազատվում է տնտեսական մարդու կողմից գրավվելու վտանգից:

Տնտեսական ու քաղաքական իշխանությունների բաժանումը բնավ չի նշանակում պետության միասնականության թուլացում: Ընդհակառակը, հակաշեշտով միմյանց, քաղաքական մարդը և տնտեսական մարդը հասարակական օրգանիզմում դառնում են համակարգի դինամիկ հավասարակշռության և կայունության բաղադրիչներ՝ փոխադարձաբար զսպելով (կանխելով) իրավունքի ու օրինականության դաշտից դուրս գալու գործընկերոջ փորձերը:

Իրավաքաղաքական մանրամասն հիմնավորումներով ՏԲ հայեցակարգի մշակման համար անհաղթահարելի արգելքներ չկան: Բուն գաղափարի և հայեցակարգի վերը շարադրված դրույթների հանրային քննարկումը կարող է փորձագիտական-աշխատանքային խմբին ավարտուն նախագիծ ներկայացնելու բավարար հիմքեր տալ:

**Ալեքսանդր Ս. Մանասյան** - աշխատանքները վերաբերում են իմացության տեսությանը և Արցախյան հարցի պատմամշակութային և իրավաքաղաքական տեսանկյուններին: Ունի հարյուրից ավելի հրատարակումներ հայերենով, ռուսերենով, անգլերենով, գերմաներենով և պարսկերենով:

## Summary

### THE ANTAGONISM OF THE ECONOMIC MAN AND THE POLITICAL MAN

As the main contradiction of the era

Alexander S. Manasyan  
*Doctor of Philosophical Sciences*

**Key words** - social force, political force, economic man, political man, western model of economic system, eastern model of economic system, economic parliament.

The article discusses the issues of transformation of the social power of an economic man into political power. On this basis, two historical phases of such a transformation are distinguished. The first historical phase is characterized by a direct transformation of the social power of an economic man into a political one, which was characteristic of a slave-owning society and feudalism. In the second

phase that began with the era of bourgeois revolutions, the social power of an economic man within the framework of the Western model of the economic system could be transformed into political power indirectly through the parliamentary system. The economic man was in the minority in the total mass of the electorate and naturally feared that the formula “One voter - one vote” might leave him in the minority in parliament. Disputes were fierce in England in the 17th century over issues of universal suffrage between the Independents and the Levellers. Fears were not removed after the parade of bourgeois revolutions in Europe. Technologies were required to overcome the obstacle presented to an economic man by parliamentary democracy. The task became more complicated especially after in the middle of the 19th century political parties appeared on the political arena of Europe – new subjects of power. Over the course of the next century, an economic person solved the problem of legitimizing the seizure of power with various technologies. Now he owns a monopoly in both the economic and political spheres. In the eastern model in the economic system, this monopoly is owned by a political man. Both in the first and in the second model, the source of social evils is the monopoly possession of all power pockets. It is obvious that the true nature of the processes of transformation taking place in the Republic of Armenia cannot be adequately understood outside the context of the analysis of the main contradiction of the era – the contradiction of an economic man and a political man. Otherwise, they will be interpreted and presented as conflicts of individuals, clans and parties without ideology. The article substantiates the idea of dividing the power package between an economic person and a political person, describes a model for such a separation.

Резюме

## **АНТАГОНИЗМ ЭКОНОМИЧЕСКОГО ЧЕЛОВЕКА И ПОЛИТИЧЕСКОГО ЧЕЛОВЕКА**

Как основное противоречие эпохи

Александр С. Манасян  
Доктор филос. наук

**Ключевые слова** - социальная сила, политическая сила, экономический человек, политический человек, западная модель экономического строя, восточная модель экономического строя, экономический парламент.

В статье рассматриваются вопросы трансформации социальной силы экономического человека в политическую власть. На этой основе выделяются

две исторические фазы такой трансформации. Для первой исторической фазы характерна непосредственная трансформация социальной силы экономического человека в политическую, что было характерно для рабовладельческого общества и феодализма. В начавшейся с эпохи буржуазных революций второй фазе социальная сила экономического человека в рамках западной модели экономического строя могла трансформироваться в политическую власть опосредованно, через парламентскую систему. В основной формуле политического равенства гражданского общества «один избиратель - один голос» экономический человек с самого начала усматривал опасность. Экономический человек был в меньшинстве в общей массе электората и, естественно, опасался, что формула «один избиратель - один голос» может оставить его в меньшинстве в парламенте. Известно, какими ожесточенными были споры в Англии XVII века вокруг вопросов всеобщего избирательного права между индипендентами и левеллерами. Опасения не были сняты после парада буржуазных революций по Европе. Требовались технологии преодоления преграды, выставленной перед экономическим человеком парламентской демократией. Задача усложнилась особенно после того, как в середине XIX века на политической арене Европы появились политические партии - новые субъекты власти. Экономический человек в течении последующего столетия разными технологиями решил стоящую перед ним проблему легитимизации захвата власти. Ныне он владеет монополией как в экономической, так и политической сфере. В восточной модели экономического строя этой монополией владеет политический человек. Как в первой, так и во второй модели источником социальных зол является монопольное владение всем пакетом власти. Очевидно, что истинная природа происходящих в Республике Армения процессов трансформаций не может быть адекватно понята вне контекста анализа основного противоречия эпохи - противоречия экономического человека и политического человека. В противном случае они будут истолкованы и представлены как конфликты личностей, кланов и лишенных идеологии партий. В статье обосновывается идея разделения пакета власти между экономическим человеком и человеком политическим, описывается модель такого разделения.

## REFERENCE

1. **Manasyan A.**, Tntesakan parlamentov depi azgayin hamadzaynut'yun, «Azg» õrat'ert', Yer., 4 mayisi 2007 t'. (In Armenian).